


կան—գաւանաբանական վէճերն արգելուած են: Կարգադրող յանձնաժողովի նախագահն է պրոֆ. Ալբէրտ Ռըվիլլը: Համաժողովը պէտք է բաժանուի 8 բաժանմունքների. ա) Բնագաշտական կրօններ և ամբիկիական կրօններ նախ քան Կոլումբոս. բ) Ծայրագոյն արևելքի (չինական, ճապոնական, հնդկաչինական, մոնղոլական, ֆինն) կրօնների պատմութիւն. գ) Եգիպտական կրօնի պատմութիւն. դ) Այգպէս կոչուած սեմական կրօնների պատմութիւն. 1) Ասորա-քաղէական և նախասիւր կրօններ, 2) Հրէութիւն և Իսլամ. ե) Հինդկաստանի և Իրանի կրօնների պատմութիւն. զ) Յունական և հռոմէական կրօնների պատմութիւն. է) Գերմանների, Կելտերի և Սլաւոնների կրօններ. նախապատմական Եւրոպիոյ հնախօսութիւնը. ը) Քրիստոնէութեան պատմութիւնը առաջին և միջին դարերում, նոր ժամանակ—Յանձնաժողովը իւր կողմից մի շարք խնդիրներ է առաջարկել, բայց դորանից դուրս ուրիշ խնդիրներ ևս կարող են բանախօսութեան նիւթ դառնալ:



ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ԱՂԱՒԱՂՈՒՄՆԵՐ և ՕՏԱՐԱՄՈՒԹՈՒԹԻՒՆՆԵՐ
ՄԵՐ ԵԿԵՂԵՅՈՑ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ ՄԷ:

Եւս չեն գտնուի աշխարհիս երեսին ուրիշ նման հաստատութիւններ, որոնք կամայականութեան այնպիսի արժակ ասպարէզ վնէին, ինչպէս մեր եկեղեցին է: Հայոց «ազատ» եկեղեցին թոյլ է տալիս, որ ամէնքն իւր վարդապետութեան, իւր կարգերի, իւր ծէսերի հետ վարուին ինչպէս կուզեն: Իրաւ է այդ եկեղեցին ո՛չ մի իրական ըստանումն չի ընդունում՝ իւր մէջ. Պետերբուրգից սկսած մինչեւ Կահիրէ, Կալկաթայից մինչեւ Ռուսոյ՝ նորա հօտի բոլոր անդամները նոյն դաւանութիւնն ունին, եւ ննթադրուում է, թէ ամէն տեղ նոյն եղանակով, ըստ արտաքնոյն եւ ըստ ներքնոյն բոլոր մանրամասնութեամբ որոշուած միօրինակ կարգերով են պաշտում: Իրիզորի Աստղծուն. սակայն իսկապէս ան-

չափ են մանր եւ ոչ աննշան տարբերութիւններն ու փոփոխութիւնները՝ ըստ մեծի մասին անգիտակցօրէն մոցրած: Հատերը գուցէ տեղի եւ պարագաների պահանջման համեմատ, յամենայն դէպս՝ ո՛չ միայն հեռաւոր մութ անկիւններում, այլ նոյն իսկ ամենահայաշատ եւ լուսաւորեալ կենտրոններում: ամէնքի աչքի առաջ մեր եկեղեցւոյ արարողութիւնները խանգարում են ու աղաւաղում՝ կամայականօրէն, եւ դիմադրող չկայ: Գրեթէ ամէն տէրտէր, ամէն երէցփոխան կամ համայնքի ազդեցիկ անդամ՝ իրաւունք է համարում՝ իւր հաւանած բանը մոցնել եկեղեցւոյ մէջ եւ չհաւանածը դուրս տանել: Իսկ ինչ որ մի անգամ՝ փոփոխուեց՝ սովորութեան ուժով շատ անգամ՝ հաստատուում՝ մնում է, եւ ո՛չ որ այլ եւս չի նկատում, որ խորթ է այն եւ օտարամուտ: Այսպիսի զեղծումների դէմ՝ բողոքներ շատ են եղել, մամուլի միջոցաւ եւս նոցա ըագմաթիւ օրինակներ հրապարակ են հանուել. եթէ չարիքը մնում եւ օր աւուր մեծանում է՝ դորա պատճառը համարձակուում ենք կարծել, հոգեւոր քարճազոյն իշխանութեան թուլութիւնը չէ միայն: Հարկաւ այստեղ եւս, ինչպէս առհասարակ բոլոր եկեղեցական խնդիրների մէջ, զխաւոր պատասխանատուութիւնը նորա վերայ է ծանրանում: Նա պէտք է վննի առաջին հսկողը հայրերի աւանդութեան անվթար պահպանութեան վերայ. բայց չէ՞ որ նորա ձեռքն ամէն տեղ չի հասնում: Եւ ուր հասնում է՝ քարոյական հեղինակութեամբ միայն գործել կարող է: Որչափ է յարգում՝ արդեօք մեր կրօնասէր ժողովուրդն այդ հեղինակութիւնը. —Երկու տարի առաջ արած ծանապարհորդութեանս միջոցին շատ տեղեր ինձ ցոյց էին տալիս եկեղեցիներում՝ չօծուած պատկերներ եւ օտարոտի սպասներ, որ նոյն ինքն Վեհափառ Հայրապետն անձամբ հրամայել էր դուրս հանել: Եւ նորա մեկնելուց անմիջապէս յետոյ կրկին ներս էին քերել. ինչո՞ւ. —նորա համար երեւի որ պատկեր նուիրող մեծատունն աւելի քարճը ծայն ունի եկեղեցւոյ մէջ, քան հոգեւոր իշխանութեան ներկայացուցիչը, վերջինս սովորաբար այնպիսի մէկն է, որ կամ իւր տգիտութեան ու անընդունակութեան կամ

կախեալ վիճակի շնորհիւ սովորել է յարմարուել ծայն ունեցողներէ բմահաճութեան, երբեմն իսկ շողորորթելով ու իւր անձնական հանգստութիւնը որոնելով ոյժ տալ նոցա կամայական ցանկութիւններին, եւ այդպէս յառաջ է տարուում ո՛չ թէ այն, ինչ որ Հայոց եկեղեցւոյ ոգին պահանջում է կամ եկեղեցական իշխանութիւնը կարգադրում, այլ ինչ որ տեղական մեծութիւններն են պահանջում ու կարգադրում: Իսկ արդիւնքը՝ որ եկեղեցին կորցնում է իւր ինքնուրոյնութիւնը, իւր միութեան ու սրբութեան դրոշմը:

Մեր ժողովուրդը եկեղեցւոյ տէր է համարում իրեն եւ որովհետեւ անտարրեր է դէպի նա, գաղափար չունի նորա էութեան եւ իսկական կարիքների մասին՝ իրելու ընտակալ է գործ դնում իրեն վերագրած տիրական իշխանութիւնը: Եւ չի հասկանում որ եկեղեցւոյ ծէսերն ու կարգերը պատահաբար յառաջ չեն եկել, այլ պատկերացումն են ու մարմնացումն մի որոշ ժողովրդի առանձնայատուկ քրիստոնէական ըմբռնման եւ քարեպաշտական զգացմանց, ուստի կամայականօրէն շրջադրել ու օտար կարկատաններ դնել նոցա վերայ՝ նոյն է թէ այդ քրիստոնէայ ժողովրդի հոգեւոր սրբութիւնն արատաւորել, միտքեցնել նորան այնպէս, որ այլեւս իւր ներքին պահանջների համապատասխան արտայայտութիւնը չգտնէ իւր եկեղեցւոյ ժամակարգութեան մէջ եւ ընթանայ սրտով ու հոգով:—Մտէք մեր հին տաճարներից մէկը՝ Տիկորի եկեղեցին, ս. Հռիփսիմէն, Թալիշի ու Մրէնի աւերակ եկեղեցիները, մի քարացած աղօթք է դա, մի սրբազան օրհներգութիւն, որ ազատ ու անքնագրօսիկ կերպով վեր է բարձրանում: Թեթեւ գրեթէ ամպեղէն կամարներով զմրէթ կազմում Ամենակալի զահրքի առաջ՝ վսեմ ու խորհրդաւոր, ինչպէս այդ լեռնական պարզ եւ համբերատար ժողովրդի ողջախոհ կրօնից ելած շարականներն են ու մրմունջները: Իսկ ի՞նչ է ներկայացնում մի նորաշէն տաճար հայոց այժմեան գաղթավայրերից մէկի մէջ, կամ նոյն իսկ հայրենի երկրում: հին տաճարին դա նոյնչափ է նման, որչափ դորա շինողները նման են հոգով Կոմիտաս կաթու-

ղիկասին եւ Գրիգոր Մամիկոնեանին:—Ժ. դարում Հայոց կաթողիկոսներից մէկին (Վահան Սիւնեցւոյն) աթոռից ձգեցին նորա համար, որ իշխաններ էր մտցրել մեր եկեղեցւոյ մէջ. իսկ այժմ՝ այդպիսի իշխաններ ու նոցա համացեղ զարդեր եկեղեցուն նուէր բերելը քարեպաշտական գործ է համարուում եւ առանձին ջերմոսանդութեան նշան: Կարող է արդեօք մտքուր ջերմոսանդութեան զգացումը լինել այստեղ շարժառիթ: Ով վաճառանցում գնած ամենափայլուն առարկայով է արտայայտում իւր ջերմոսանդութիւնը եւ չի հարցնում թէ որչափ կարելոր է այն եւ պատշաճ իւր եկեղեցուն, խորհուրդ չէր անի նաեւ իւր սրտի հետ. նա փայլել է կամենում իւր նմանների առաջ—եւ եկեղեցին կորցնում է իւր իսկական պայծառութիւնը, անտոյի հաշիւների ասպարէզ դառնում:

Բոլոր գեղծութիւնները կարելի չէ հարկաւ անտոյի հաշիւներով քացատրել. պէտք է նկատել, որ շատ քան նաեւ անգիտութիւնից է յառաջ գալիս: Մեր եկեղեցին ժամակարգութիւնների համար հաստատուն հրահանգներ չունի եւ եղածը շատերին յայտնի չէ: Եթէ ուրեմն դորա կենտրոնական իշխանութեան կողմից պարզուին, կէտ առ կէտ գրի առնուին եւ մատչելի ծելով հրատարակուին՝ գուցէ մի շարք թիւրիմացութիւններ կվերանան եւ ձեռնհաս անձինք աւելի միջոց կունենան հաստատուած կարգերը պահպանել տալու: Սակայն շատ քաղցամակողմանի եւ ծանր խնդիր է այդ եւ նորա իրագործումը մօտիկ ապագայում անուպատելի: Առ այժմ՝ գոհ պէտք է լինինք, եթէ գոնէ մաշտոցի եւ կենդանի աւանդութեան գծած սահմաններից չեղնեն:—Արժ. Ղազարոս ք. Եւփեսեան ծիսական խնդիրների վերաբերեալ մի քանի հարցումներ ուղղելով մեզ՝ մատնացոյց է անում այնպիսի խանգարումների վերայ, ինչպէս օր. մկրտութեան ժամանակ նարօտ չգործածելը, յուղարկաւորութեան միջոցին խաշվառի փոխարէն չօժուած պատկերներով դրօշակներ տանելը դազադի առաջից ելն, որոնցով մանաւանդ Ղրիմի եւ Ռուսաստանի այլ կողմերի հայերը ելնում են նոյն իսկ այդ սահմաններից: Տէր Հօր հարցումները

մենք չուպագրեցինք, որովհետեւ մի մասի պատասխանը պարզ է, միւսներին դժուարանում ենք պատասխան տալ: Մենք գիտենք, որ եթէ թուելու լինէին մեր եկեղեցւոյ գաւթում թէ հօտի եւ թէ նորա հոգեւոր հովիւների կատարած զեղծումները՝ շունչ չէր հասնի հաշին ամփոփելու համար. գիտենք, որ կան տեղեր, ուր ոչ միայն ժամակարգութեան մասերն են խանգարուում, այլ ամբողջ ժամակարգութիւնը. ուր ամփոփելով ժամ չեն ասում, իսկ ասելիս տարբերութիւն չեն դնում՝ հանգստեան շարական է երգածը թէ յարութեան. ուր առաջաւորաց պահին ճաշու ժամ՝ ասել եւ նման կարգեր վերացրած են բոլորովին. ուր քահանայն կրկնակողիկներով է սեղան քարծրանում՝ եւլն եւլն: Գիտենք, եւ դժբաղդաբար դէմն առնելու շատ միջոցներ չունինք: Որպէս զի կարելի լինի այստեղ հիմնական քարեփոխութիւններ անել, առաջ մարդիկ պէտք է փոխուին. իսկ դորա համար ժամանակ է հարկաւոր եւ նոր պայմաններ: Մենք կարող ենք միայն յորդոր կարողալ, որ ամէն հասկացող հայ իւր պարտքը համարէ այսպիսի զեղծումների վերայ ուշադրութիւն դարձնել. չասէ՝ իւր գործը չէ՝ կամ հոգեւոր ատեանին մի բողոք, լրագրին մի յօդուած գրելուց յետոյ չժանձրանայ: Զուր ենք կարծում, թէ այսպիսի խնդիրների մեծին խօսելը չուր ծեծել է. աշխարհիս վերայ ոչինչ չի կորչում՝ չի կորչում՝ նաեւ ճշմարիտ, ազնիւ խօսքը: Գլխաւոր ջանքը պէտք է լինի համայնքի այն գիտակցութիւնը զարթեցնել, որ եկեղեցական կեանքի մէջ դաւանութիւն, քարոյականութիւն, ծէս, կանոն, արարողութիւն, անօթ, շինուած՝ ամէն շարժում՝ սերտ կերպով կապուած են միմեանց հետ եւ մէկը տեղից շարժել կարելի չէ, առանց միւսը խախտելու: Եկեղեցւոյ ինքնուրոյնութիւնը պահպանելու համար չնչին համարուող կէտերն անգամ՝ նշանակութիւն ունին. նշանակութիւն ունի թէ ինչպէս է շինուած տաճարը, սեղանը, խաչը, ջահը. ինչպէս է կարուած զգեստը, ինչպէս նկարուած պատկերը. տօներն ինչպէս են տօնուում, շարականներն ինչպէս երգուում՝ եւլն: Իսկ շատ այդպիսի կէտեր կան, որ մեր աշ-

քի առաջ են, րայց չենք նշմարում: Գեշտութեամբ ուղղել կարող ենք, րայց ուշադրութիւն չենք դարձնում, որովհետեւ անտարբեր ենք դէպի եկեղեցին, որովհետեւ չենք զգում: Եւ մեր հոգեւոր կեանքի զարկերակները նորա մէջ են ամփոփուում ու մի սիրտ կազմում եւ մեր ստացած արիւնը մարտը ու հարազատ կլինի մինչեւ այն ժամանակ միայն, քանի կենդանի է այդ սիրտը՝ հայրենի լեռների մարտը շնչով է սնուում՝ եւ քարախում:

ՍԱՐԱՍՓԵԼԻ ԱՂԵՏԸ.

ԴԵԿՏԵՄԲԵՐ 19-ին երկրաշարժը Ախալքալաքի գաւառի բազմաթիւ հայաբնակ գիւղեր աւերեց, հարիւրաւոր մարդոց փլատակների տակ թողնելով և հազարաւորների՝ անտուն, անօգնական՝ սաստիկ ձմրան սառնամանեաց մէջ: Որչափ անգօր է մահկանացու մարդը բնութեան այսպիսի արհաւիրքների առաջ. հանգիստ ապահով նստած ժամանակ յանկարծ փչում է տունը գլխին, և ի՞նչ պատահմամբ մի հայր, մի մայր, մի ծերունի, մի երեխայ շուռը բերնում ելնում է աւերակների տակից՝ ի՞նչ պէտք է զգայ նա այն բաղկին, երբ միտքն է գալիս, որ ոչ ոք չկայ այլևս իւր սրտի սիրելիներից՝ չկայ իրեն կաթ տուող կովը, մէջքի վերայ տանող ձին, գութան ձգող կըր — ինքն է միայն մնացել, իւր չոր դուխը ողբալու: Ի՞նչ պէտք է զգայ նաև կողմնակի դիտողը. նոյն իսկ այն դէպքում երբ անակնկալ դժբաղդութիւնը միայն մի մարդու է հասել, երբ նրա աչքի առաջ դուրս են բերում կառքի տակ ընկածին, ջրում խեղդուածին, կրակի մէջ այրուածին՝ ընդարմացած մնում է նա և պարզ հաշիւ տալ չի կարող, թէ ինչ է կատարուում իւր շուրջ. իսկ երբ այսպէս հարիւրներ ու հազարներ են զոհ գնում մի հարուածով... Ո՛հ, աղէտալի է յիրաւի մարդու կեանքը, անազորոյն բազդի ձեռքին խաղալիք: — Բայց մի՞թէ խաղալիք մի՞թէ Նա, որ մեր բոլոր ցաւերը վերցրեց և ծանապարհ ցոյց տուաւ դէպի ճշմարտութիւն և կեանք՝ մարդկութեան այդպիսի մեծ ցաւերի համար սպեղանի չունի, չի կարող ձգել